

ՅԱԻԷԼՈՒՄ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ. ՀՈՎՏԵՄԵՐ.

ՊԱՏԱՍԻԱՆԻ Ի ՀԱՅՈՑ ԹՂԹՈՅՆ ԱՂՈՒԱՆԻՅ
ՂՐԹԱՆԻՍԻ ԲԵՐԹՈՂԻ:

Պատուական գտելոցք և վեհ հրաշակելոցք, որք վարութիւն բերել յօժարութեամբ յառարկութեան և զանտեղիս բացասողք, նաև նմանք թուեցեալ ի դէպ է ինձ իմնալ կամօք հաւասար ընթացք ջանի ակենականիցն, նորոգունիցն լսօղս և պատմիչս յարգեան ժամանակիս՝ ի մէջ հիւսիսականունդ տաղաւարոցք, զբոլոր լսօղս տարբերմամբ ի մանաւանդն սակս ջամբեցեալ* զի խորհրդոցք սեւեռումն՝ Տէր Մխիթար Ամարասու եպիսկոպոսու եւ Սիմոն Մեծ իւրեանց, և թէ այլ եպիսկոպոսունք նմին համախոհակք, և ուխտ սրբոյ եկեղեցւոյ, և ազատ մարդիկ կամ այլք ի ժողովրդականաց միարանակք՝ Յաքոբաճայ հայոց կաթողիկոսէ եւ ի Թէոդորոսէ մարդպետական եպիսկոպոսէ, ի Ստեփաննոսէ Բագրեւանդայ եպիսկոպոսէ, ի Դաւթ Սիմեոնաց եպիսկոպոսէ, ի Մովսիսէ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, ի Զրիստափորէ Ապահունեաց եպիսկոպոսէ, ի Մատթէոս Ամատունեաց եպիսկոպոսէ, և յայլ եպիսկոպոսաց և յուխտ սրբոյ եկեղեցւոյ, և յազատ մարդկանէ և ի ժողովրդականաց: Ըղձամք արօթալիր և ուժգին ինդրուածօք սրտի զտէրունեան հոգեխառնող ջոյն համարձակապէս մեզ առ ձեզ ստել, քանզի զրով մեզ ի ձէնջ պատմեցէք զձեր որպիսութիւնն և զկամս, և թէ անհակառակք արգեօք զստեղծեալ հակառակութիւնն՝ զոր ընկալաք ի նախարարէ միոյ սիւնոյ Գրիգոր անուն: Քանզի և զարանակէն ձերոյ ասաց ի կերողոյ հրաժարեալ, բայց մեզ բարեբարութիւն լնալ զուշակեցաւ և կամաց շարժութիւն ի հաստատուն և ի կատարեալ խոստովանութիւն երանելի նախահարցն հասարակաց ի Զրիստոս, թէպէտ և զլուրս ի նմա զանազանեալս տեղեկացաք, և թէ ըստ կարծեացս զոր առաքիցէ Աստուած վայելուչ խոստովանութիւնք, թէ յաշակերտաց բանին, բայց և յօտարաց եղեալք: Ում ոչ

սրտալիր ուրախութիւն թուիցի. քանզի նա աւելագոյնս անդր ևս անկումն խաւարին* իշխանին է, և աշխարհի յղթութեանն զքաջալերութիւնս ի Պրկոզէն՝ ամենեցուն առաւելագոյնս հնչեցուցանէ, թէպէտ և ինքն անպարտելի է միշտ. քանզի նա զայն ձայն տայ լսել թէ անդաստիարակ ամենեքեան զուք որդի Աստուծոյ էք հաւատովն ի Զրիստոս: Զի որք ի մի հաւատ միով հաւատով նահատակեալք, թէ երկու կամ երեք խմբեալք, զամենայն զինչ է խնդիր յանուն Ուրդոյ ի Հօրէ շնորհի ինքնին ևս եկեղեցւոյ, որ մի մարմին եմք բազումքս՝ արդար և բարին, և ուղիղ խոստովանութիւն հաւատոյ է հիմն ի վերայ հաստատուն վիմի եղեալ՝ առեալ զիմաստութիւն յԱստուծոյ իմաստութեանէն, կատարեալ այրական հասակաւ զլափ խոստովանութեան որ ի Զրիստոս լիագոյն ընդգրկել, որքան թողան ի մարդոյ ի շնորհէն, որ ի յուղիտ վատ ամբարշտութեան և ի հոգմոց օտարաձայն վարդապետութեան անդրդուելի մնայ: Զայս զոյ իմանալ միարանելն ցնծութեամբ և երգով հրեշտակաց, և թէ յերկրի են նոցա դասակից. զի զսրբոյ Երրորդութեանն խորհուրդ անյաւելուած և առանց թերանալոյ երգեն խաղաղութեան ծնեցելոյ յերկրի ի բարձունս Աստուծոյ, և հաշտ արարին մարդկան փառք ասիցեալ: Քանզի ի Պօղոսէ ուսայ այսպէս փոխադասել, նոյնպէս անհարկելք յեկիւն դասակից, զնոյն փառարանելով ի միութիւն, և են կամահամոյ ամենեցուն Արարչին: Եւ թէ նոքա որպէս ցուցալք, սիրելիք, խնդութիւն և պսակ առաքելոցն՝ անպիտանքն ի հաւատս, տարազիրք են ի յաւելտեանիցն յուխտէ և խոտորեալք զկնի սատանայի. քանզի զհետ երթեալք են այնր, որ միշտն ատեայ զձմարտութիւն և էութիւն իւր ի ստութեան, ուրախութիւն այնց, որ խնդացուցանեն ի տարտարոսն ընդ չորքոտանեացն բնութեան. քանզի թողին զարդարութեան ձանապարհն, դարձեալ հաւասարեցան անասնոց անմտից: Դարձեալ** սովեալք իբրև շունք երկնից իջեալ հացէն՝ յաճին յայրատարար զքաղաքաւ զեկեղեցեաւն Աստու-

* Օր. ջամբոցն:

* Օր. խաւարային: ** Օր. դարձեալք:

ծոյ, զօղանջնն բերանօք իւրեանց զորս ոչ ունէր եկեղեցի. քանզի սուր է ի շրթունս իւրեանց յօտարացնել ի մօրէն ըստ ինքեանց և զայս և առնել զբաւիճս աղուխուց, զիւաց, որոց նման են, և զայն ոչ գիտեն: Թէ սուրբ նոցա ի սիրտս նոցին մտանեն, և անհնարին կործանուամ լինի այնմ տան, զի ի վերայ աւաղոյ հիմնեցաւ: Բայց մեք, եղբարք, թէ ոչ տեսնէաք պառակտեալ զգեղեցիկ հօտ քաջն հովուապետի, և զողն խարդախութեամբ ի գողունս, և միշտ ի մէջ հեթանոսաց վասն անմիաբանութեան անուանն Աստուծոյ հայհոյումն՝ թերևս զանվարժութիւն և խորհրդոցն զոչ քաջաբերութիւն փաստաբանեալք, ի պարսաւափրացն բարս հայեցեալք, զմեզ հրաժարեցուցանէաք ասել, թէ ո՞վ ելանիցէ ի բարձրութիւն հաւատոյն բանի՞ գուցէ զՔրիստոս ըստ մեզ վայրաբերիցս հաւասարել, կամ իջանել յանդունդս իմաստից զրոց՝ ըստ մերում մեռելամտութեան զանծախապէս աղքատացեալն, որ ըստ մեր գոութեանն վերայ գոն գոյ ասել այսմ մտաց: Իսկ զոռոգումն կաթուղիկէ առաքելական Եկեղեցւոյ հանապազարուխ, որ է բան հաւատոյ աստուածաշունչ զրոգք, իբր ի սրտի զրեալ ի նմա և արձանագրեալ անջինջ՝ ոչ տարակուսել ողջամտիցս զհայհոյողս Բանին մարմնացելոյ արտաքս քեցեալ հանել յԵկեղեցւոյ Աստուծոյ, և զթիւր միտս խորամանկեալ զպէսպէս ուսուցանողս և զօտարաձայնութիւնս յառաքելոցն, և կամ զխօսս սպասաւորաց Բանին ի թիւր իմացումն զղջանալն՝ բազմաց ցուցանել և զզուշացուցանել զանձինս բարեմտաց. այլ և ձեր ըստ նախնեացն հարազատ եղբայրութեան գութ բռնի ձգեալ էա՞ծ զմեզ այսօր: Արդ՝ զրով ձեր առ մեզ ըզխոստովանութիւն հաւատոյ կամեցաք համառօտս յիշատակել և առ նմին զՀոգւոյն սրբոյ վարդապետութիւնն գնել, ըստ մասին ի ճշմարտութենէն հեռանալ՝ և կամ միաբանել յետ ծանօթանալն բազմաց: Տուր ինձ և զքո միտս ոչ զլայնանալն զուղիղն, և մի դասիլ ի հակառակող կաման, զի Եկեղեցւոյ Աստուծոյ ոչ է սովորութիւն: Քանզի ի ձէնջ գիրն ծանոյց մեզ այսպէս: Եւտ զուզնաբեա զմէնջ գօհութիւն իմն ասելոյ՝ ամբաստանութեան

ճառ զմարդոյ տկարագունի էր նշանակեալ, և զմեր նմա հաւատալն իբր անիմաստ անմեղի գիրն համբաւեալ՝ եթէ ոչ թերի այլ լի նման ձեզ եմք ի հաւատս. զի առաքելքն և վարդապետք հասարակ և միապէս տւետարանեցին: Եւ այպա յետ սակաւ ինչ բանից սրբոյ Երրորդութեանն՝ յառաջ քան զյաւիտեանս զյեթութիւն էր աստուածաբանեալ տարաբերմամբ. և յետ յոլովից զմարմնաւորութիւն Բանին մեզ պատմեցէք զանազանեալ մրտօք, զոր վարդապետութեան միտս Եկեղեցի Քրիստոսի յառաքելոցն չառ, և ոչ զբանս զըրոց ի նոյնս բռնաձգեալ այլ զայլոցն յափըշտակեալ ի նմանէ որս, որ խօսին թիւրս ձգել զինի իւրեանց զաշակերտեալն: Իսկ զայլ խօսան, որք ոչ ընդ սոսա միաբանին, իբր զպարզամիտս խաբելոյ, կեղծաւորութեան դուռն առ մեզ զհաւատացեալս փակի. և զի այսպէս է, այ՛ պատուականք, միտ գիք խոստովանութեան ձերոյ ուր ձգէ և որպէս մեկուսացուցանէ ի Հոգւոյն սրբոյ վարդապետութենէ: Արդ՝ զՀօրէ ասել ամենակալ, կատարեալ Աստուած, արարիչ ամենայնի և այլքն՝ ձայնակից մեր են: Իսկ յառաջագէտ և նախակարծ զնացուցանել՝ օտարին սերմն. զի թէ յառաջ գիտակ՝ կարծող ոչ է, և թէ երկոքեանն անհաս յեթութեանն ըստ քեզ մուտ և շարժումն՝ ուրեմն հակառակ կայցին նմա. քանզի նախ գիտութիւն և յառաջ կարծիք միմեանց հակառակք և ի ներքս անկանի երբեմն և ստութիւն ընդունայնանալ կարծեացն և վրիպումն և իրն, վասն որոյ յառաջ կարծիքն վաղ և իսկ զնա գոյն քան զկարծողն, և նոյն և ի բանին. վասն զի ըստ կարծեաց բանաւորի և բանաշարժից և նորին զհետ երթայ: Ո՞րպէս ուրեմն ասէ կարծիքն և յամենայն եղեն, և ի կարծելոց բարութեանց միանգամայն վրիպել. և այլ այսպիսի կարծիք առ ամբարտաւանութեան մօտ տան և անօրէնութեան: Ապա է, ո՞վ ասացէ զայս յ՝ փոփոխեալ. և զայս յԱստուած ի Հայր յիմանալ, որ զգիւաց կատարութեամբն զանցուցանէ. Տի՛նա, ասէ, ես եմ՝ նոյն, որ յառաջինն և այպա ես եմ՝ Տէր, որ խօսիմ զարդարութիւն և պատմեմ զճշմարտութիւն. և թէ, Ես եմ՝ Տէր Աստուած, որ արարի զյայսպայսն որ գալոցն են. և ի Դանիէլ նա՞

խաղէտ և զժածուկս անսօդ, և զամենայն գիտակ զնա ցտցանէ, իսկ զամենայն մերկապարանոց առաջի նորա կալն և՛ ի վերայ գալոց ինչ ժամանակաց իմանայցես՝ ապա նախակարծ զՀայր ասել անօրէնութիւն է: Ծմանապէս և զՈրդոյ ճոխութեանն անուանաւ որ ի ձեռն զասացան՝ ցտցուք: Ասելն զՈրդի Համարոյականն՝ մշտենջենակից չօր, մշտենջենաւոր Համարոյական ծնունդ և յառաջ քան զյաւիտեանս բովանդակ Աստուած, նոյն էութիւնս և Աստուծոյ զԱստուած ծնել միածին, և այլքն սոյնպիսիք ասացեալքն՝ այդ խոստովանութիւնք ընդ մեզ միարանին: Իսկ անդրանիկ միածին զնա ասել և անձաձանչ՝ Հեռի է ի կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ բարբառոց: Քանզի անդրանիկ անուն զբազումն նշանակէ, և առ նմին միածին մի միոյ որպէս երբեմն Սողոմոն թագաւորութեամբն անդրանիկ ի մէջ այլ որդւոցն Դաւթի, և ըստ Բերսարեայ մի ժօրն իւրոյ: Այլ և ըստ ժամանակի ոմն նախ և ոմն միջին և այլն պակասութեան, և կէսքն առաւելագոյն կրտսեր, նոյնպէս և կոյտնք նոցա իսկ անձաձանչը անուն նախնութեան ասի, և է նա ստուերը լուսոյ պակասութեան, և սմանք պատուհասականս որպէս խոսար անշօշափելի կալ յոգոջ զիշեր անգիտութիւն զբարի, և ի կասպաշտութեան յաղտելի զօրծս անկանելն է, որպէս զիբք ասեն: Արդ՝ ո՞ ի մոլեաց զայս ի Բանին կարծիցէ. քանզի յառաջ քան զմարդկանան զօրմէ մեր խօսքս են, ո՞ւմ է անդրանիկ ի ձեռն մարգարէին ասէ Հայր և Արարիչն: Ծն եմ Աստուած և չիք այլ որ: Աստուած յորժամ լսես մի անբան և առանց հոգւոյ կարծիցես քանզի անզգայութիւն է այս: Ոչ արդեօք լսիցես զի Հայր ցՈրդի ասէ. Ընդ քեզ է ինձ սկիզբն առուրց զօրութեան քո, այս ոչ մի քան զմիւսն նախ գոյ: Իսկ ի վայելչութիւն սրբութեան քո՝ զաստուածութեանն հաւասարութիւն միութեան և յորովայնէ, որ է նոյն էութիւն բնութեան չօր, զի որովայն և ծոց չօր, յորժամ ասեն զիբք, վասն Որդոյ զնոյնութիւնս որ ի նմանէ է, նշանակէ ռստցանելով ի մերումն զմեզ, այլ ոչ Աստուածում է այս: Եւ յառաջ քան զարուսեակ ծնայն զքեզ՝ նախ քան ի կարգ անկեալ

օրաց ըստ լուսաւորացն է ծնեալն, յայտ անհելով զանսկզբնութիւնն, և անցանէ քան զմիտրս և զբան մարդոյ, և հրեշտակաց ծնունդըն, և է միածին: Իսկ վասն Հոգւոյն սրբոյ ինքն ասէ, թէ յինն ելանէ: Արդ՝ ո՞ւմ է նա անդրանիկ և որպէս ցտցաւ մի էութիւն չօր և Որդւոյ: Լոյս ասի Հայր, Եղիցի լոյսն Իւրայելի հուր: Լոյս ասի Որդի, Էր լոյսն ճըշմարիտ և խաւար ի նմա չիք և ոչ մի, և ըստ գիտութեան զիտէ՝ որպէս Հայր զՈրդի, և Որդի զՀայր նմանապէս, ապա անձաձանչ զնա ստոզն երեի թշնամանողացն դասուց: Բայց մեք տրտմական հիացմամբ զգածեալ եմք, թէ ընդէր արդեօք ոսոխն բարւոյ զարտաձայնութիւնս և որ վասն սրբոյ Հոգւոյն հակառակըս տալ դասել հնարեցաւ՝ թէ դադար առնու առ Որդոյ, և ապա դարձեալ զնա իշխան և պետ Աստուծոյ ասել: Եւ դարձեալ զանտանելի հայհոյութիւն՝ տարրական զնա ասել, և ընդ նմին ասել դարձեալ ոչ Հայր քան զՈրդի աւագ, և ոչ Որդի քան զչօգի այլ միարանս միակամ և միախոհ, և զսոցին հաւասարսն սուրբ * Եկեղեցի դաւանէ ընդ նմա: Արդ՝ եթէ տարրական է և դադարէ առ Որդւոյ, և պետ իշխանութեան է Աստուծոյ՝ այլ ուրեմն էութիւն և գոյութիւն է. զի տարրեղինի հարկ է արարած լինել, և ի տարրեղինի բանաւորեցաւ շարժութիւն և ոչ պարզութիւն, և շարժութիւն և ախից դասումն՝ թէպէտե անեղծանելի ասացեր, և այսպէսն տըկար և աղքատ է, որպէս և Պօղոսն ասէ. Զիմարք միւսանգամ դառնայք անդրէն ի տարերս ի տկարս, և թէ, որպէս նօթձէքն, և դադարէ առ Որդոյ՝ ապա և ի սկսանելոյ հանգչելովն և դադարելովն լուծանէ յիւրն էութեանէ, և կամ պակասեալ և թէ խառնեալ իմանայցենս, որպէս փայլակն ինչ ի մեծ խարոյկ՝ եղիցի շփոթութիւն: Թողից ասել զանհասարին հայհոյութիւնն, որ անդուստ իմանի՝ զԲանըն և զՀայր ի տարերս իջուցանել, և նմա լինել Աստուծոյ պետ և իշխան՝ անդր է քան զուրուստիցն բարբաջանս և այսպիսի կատարութիւն Սիմոնի կախարդական աստեացն է. քանզի թէ զՀոգւոյն սրբոյ զէութիւն և էութիւն և բաժանեալ զիմօք անբաժանելին,

* Օր. որպէս:

և մտօք միայն որոշել որ ոչն որոշի՝ միաւորեալ
 ստաւածութեամբ, առաւելաբարացի հա-
 ւասարմանն և է՛ ինչ, զոր և զուք վկայեցէք,
 զի ի ներքս ածէ զօտար Աստուած. քանզի
 նա ասէ. Զփառս իմ սյրում ոչ տաց: Այլ
 որ փասն Երրորդութեանն յառաջ քան զյա-
 ւերականս ասացեալ՝ եկ փոխեմք բանիւս և
 յազազս մարմնաւորութեան Որդոյ ասացեալ-
 ւան: Արդ՝ Որդին Միածին անբաժանդակելին
 բովանդակեցաւ կամօք Հօր և Սուրբ Հոգւոյն,
 ինքնակամն ի սուրբ յարգանց Աստուածա-
 նին եմուտ և յարգանդին զԱստուած զին,
 զհօգի և զմարմին միացոյց: Աստուած զէ թէ
 Բանին Աստուծոյ ասեալ և թէ հոգի և մար-
 մին մարդկայնոյս ասեալ միացեալ՝ այ՞ ո՛րն իս
 ձայնակից ես այգումեզ, մանաւանդ թէ յա-
 ւերուս ի Հոգւոյն սրբոյ և Բարձրելոյն զօրու-
 թեան հոգնաւորեալ: Իսկ զի կուսեն ի Հոգ-
 ւոյն սուրբ անախտ առանց մեղաց աստուա-
 ծախառն մարմին էա՞, այս միաք օտար են
 յԵկեղեցւոյ, զի թէ մարմինն աստուածա-
 խառն անախտ առանց մեղաց էր և ապա
 առ՝ նախ ստեղծեալ՝ և ապա առեալ լինի,
 բայց կամիս ուսանել զնոյնդ զմարմին աստ-
 ուածախառն որ էա՞, ո՞վ էր այն խառնեալն
 ընդ մարմնոյն. զի թէ յօտար Երրորդութե-
 նէն որ խառնեցաւ՝ օտարին է մարմինն որ-
 պէս զուք ասեալ զի ընդ իւր ստեղծ, և
 եթէ ի սրբոյ Հոգւոյն իմանաս զխառնումն
 ուրեմն սուրբ Հոգին մարմնացաւ, զի որ խառ-
 նեցաւ նոյն մարմնացեալ ասի, ապա թէ զԲա-
 նին խառնեալ յառաջ ասեալ՝ ո՞վ առ զնա ի
 վերջոյն: Եւ կամ զարձեալ փոքր մի յառաջ՝
 յաջորդն որ ասէ, թէ Բանն Աստուած և Աս-
 տուծոյ Բանն և Էմ մանուէլն և զայն խօ-
 սըս՝ մինչև ցայն վայրն, թէ աստուածախա-
 ուրն Աստուծոյ մարմնափն ի Մարեմայ է, Զէմ-
 մանուէլդ անուն Բանին, առանց մարմնոյն
 իւրոյ՝ ո՞վ ուսուցանէ կոչել, և զարձեալ ո՞ր-
 պէս ասեալ, թէ զառեալն ընդ էին Է արար,
 ըստ այնմ թէ, Իմաստութիւն շինեաց իւր
 տուն, Զի թէ ըստ Պօղոսի ասելոյն Զբխասոսդ
 անուն մարմնացեալ Բանին առաւելցաւ, զո՞վ
 շինեաց իւր տուն միաւորութեանս Արդ՝
 զանց առնելով զնորա շարաշար միասն բացա-
 յայտելոյ, զի իմաստնոց յայտնի է, ի Գրոցսրբ-

րոց վարդապետութիւնն փութացուք. քան-
 զի Իբրև եկն լուսն ժամանակին, առաքեաց
 Աստուած զարդին իւր ի կնօջէ եզանիլ: Արդ՝
 աւետարեցաւ կոյսն ի ձեռն հրեշտակապե-
 տին Հոգւոյն սրբոյ զալ ի նա և ուժգնու-
 թեամբ Բարձրելոյն Հօր հոգնանալ ի վերայ
 նորա: Զանցի ծնունդն սուրբ զեկուցանէ և
 Բարձրելոյն Որդի և ապի Բանն մարմին եղեալ,
 և զի մարմին անուն Զիբք մարդ ասեն՝ Ես-
 վէլ պատմէ, Հեղից ի վերայ ամենայն մարմն-
 ոյս, և Բանին ի կուսեն մարմին եղեալ, և զի
 Բանն Աստուած հոգի է, ձեր իսկ խոստո-
 վանեալ, և զի մարմին ի սրբոյ կուսեն՝ հրեշ-
 տակապետն զեկուցանէ, մարմին մինչ ասեմ
 ընդ նմին իմա հոգին բանական և միտս և
 զինչ ի մարդկանէ, և այսպէս իբր հոգի և
 մարմին միացեալ: Բանն մարմին եղև, սաղմ
 նառեցաւ որ իսկզբանէ Որդին Աստուծոյ՝ ոչ
 ի կամաց առն և ոչ մարմնոյ ծնաւ կատա-
 րելապէս ի սրբոյ կուսեն՝ կոյս պահելով ընդ
 մարմնոյ վեր մայրն. փասն որոյ և Աստուա-
 ծածին ապի և կուսածին ծնունդն է: Որ ի
 կերպարանս Աստուծոյ էր՝ զճառային կերպ
 առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ,
 և ձեռով իբր զմարդ գտաւ, առանց մե-
 դոց: Եւ Որդին Աստուծոյ եղև ի զաւա-
 կէն Դաւթի, փասն ըստ մարմնոյ՝ Սահմա-
 նելոյ Որդւոյն Աստուծոյ, զօրութեամբ ընդ
 Հոգւոյն սրբութեան: Աստ իմա ինձ և զոչ
 փոխեալ յեութենէ զՈրդի և զՀոգին սուրբ,
 որպէս առ Հօր հօգի Աստուծոյ, այսպէս և հօ-
 գի Որդւոյ, և ի մարմնանալն Որդոյ՝ սոյնպէս
 և զօրդի ի Հօր և զՀայր յորդուջ, բայց ոչ
 զՀայր մարմնացեալ ասեմք, և ոչ զՀոգին սուրբ,
 այլ զԲանն Աստուած: Զանցի համբակ զեռա-
 ճիղմն որպէս ասացի, յառաջ քան զարուսեա-
 կրն մարմնով, հօգուով մտօք զգայութեամբ
 ծնանի և անուն կոչի՝ ընդ մեզ Աստուած:
 Ո՞վ նոր խառնմանն անյեզ, որ յԵրրորդութեան
 ոչ այլ տեսանի և յերկրի ըստ մեզ տայ ա-
 ւետիս հրեշտակն Տեառն, թէ որ այսօր ծնաւ
 Տէր է Յիսուս որ է Զբխասոս, և ըստ մե-
 ռում Փրկիչ, որ է Օծեալ: Արդ՝ ո՞վ է որ
 պատմէ ըստ ձեր յառաջ ասելոյն, կամ զաս-
 տուածախառն մարմինն աւետել և կամ զԷմ-
 մանուէլն առանց մարմնոյն Աստուածն Բանի:

և կամ զմիաւորութիւնն նորա ասել՝ որպէս
 իմաստութիւն շինել տուն: Լինի կաթնասուն
 որ յառաջ քան զյաւիտեանս և յորովոյնի
 Բարձրեան երգեալ ի Զաքարիայէ, որպէս
 զմերն ի մարմնանալն յանձն առ կրել՝ ածէ լի
 իմաստութեամբ: քանզի իմաստութիւն չօր
 ինքն և շնորհք Աստուծոյ հօր ի վերայ
 նորա զի նա իսկ է շնորհն երեւեալ և այս-
 պէս ընդ ամենայն տիս հասակի ամմամբ ան-
 ցեալ զի առ մեզ պարսաւորութեանն տեղի
 ոչ լիցի: Մի քեզ առանց վկայութեան թուե-
 ցին ասացեալքս զի ի Գրոց է և չէ ի ծա-
 ծուի: Պարձեալ յիշատակել ձեր յայսմ վայ-
 լի թէ լինի հպատակ հօր և մօր իւրոյ հը-
 նազանդական աստուածախառն մարմնովն՝
 թուիք մեզ երկուս ցուցանել: մի զայն որ
 հպատակն լինի և միւս զհնազանդական
 զաստուածախառն մարմնն: իբր օգնակա-
 նաւ վարեցեալ և զի վերադոյնն արարեալ
 է զսորա հարցումն: արդ՝ զայս ինդրեմ.
 ով ուսուցանէ զայդպիսի նոր վարդապետա-
 թիւն: զոր առաքելոցն չէ խօսեցեալ: զար-
 դեօք զառմանդ կարծիս այնու նմանու-
 թեամբք իմացայք՝ առանց ամմանն զհրամանն
 ընկալեալ նախնոյն և թէ Առ յինքն զլին իւր
 կամ թէ Առ իւր կին և ևս երկօքեանն մի
 մարմն և մի հօգի՝ ըստ Մաղաքեայ: և որ-
 պէս Յակոբ երկրպագութիւնն Յովսեփայ Հաս-
 քելիւ կատարէր զերազոյն մեկնութիւն: Այս-
 պիսի մտօք համարձակութիւն բերեն ասել
 ոչ իջեալ մարդացեալ և ոչ ծնեալ այլ այն-
 պէս իմանալ իբր զմարդ օք, որպէս ի հուսմն
 զնորայէլ անդրանիկ որդի իւր կոչէր: այլ
 քու մի լիցի անաստուածութիւն է այնպի-
 սի իմանալ: իսկ աւանդօղքն մեզ զիւրեանցն
 առեալ ի կերպին Աստուծոյ եղևան: զկերպ
 ծառային առ և նա եղև ի նմանութիւն
 մարդկան և կերպարանաւն իբրև զմարդ զը-
 տաւ: և զնա ասացին լոյս փառաց և կեր-
 պարանք էութեան չօր և թէ՛ Որով ամենայն
 ինչ եղև և զնա՝ Մի Տէր Երեսու Զրիստոս
 որով ամենայն և մեր նովաւ ուսուցին մեզ և
 ոչ այդպիսի կարծիս: Գրեալ է ձեր և վասն
 մկրտութեանն թէ իբրև երեսնամեայ լինի մը-
 կըրտի ձայն չօր յերկնից վկայէ: Հօգին ա-
 ղանակերպ իջանէ. այն ինձ զուսուցեալսն

յաւետարանացն ասեալ: իսկ զչոգոյն սիրոյ
 պատի բերել զայդ ոչ ուստեք լուսայ յԱստուա-
 ծաշունչ զրոց յԵկեղեցւոջ. քանզի որ բնու-
 թեամբ Որովն Աստուծոյ է և ի վերջոյ ժա-
 մանակի ի կնոջէ ծնաւ ըստ մարմնոյ՝ և Հօ-
 գին նորին հօգի որպէս չօր: Թէպէտ և զի-
 մօք ի բարձունս ընդ չօր: ում բերէ պատի-
 քանզի պատի յանարգութեան, ճոխացելոյ բե-
 րի և զոչ պատուեալն ի պատիւ հասուցանե-
 լոյ՝ այլ ոչ այսպէս. քանզի Երեսու Զրիստոս
 երկի և այսօր նոյն և յաւիտեանս. բայց որ-
 պէս եղև մեզ ճանապարհ նորոգ ուսուցանե
 մեզ զվերստին ծնունդն յաւազանէ: Արդ՝ Որ-
 զի մկրտի ոչ ի մաքրութիւնն այլ յօրինալը-
 րութիւն. գնոյն մեզ չօր ձայն յերկնոյ՝ Հօ-
 գին ազանակերպ իջմամբ՝ Թէպէտ Մկրտչին
 ուսուցանէ Հայր և Հօգին, թէ որ ի բարձու-
 ձունս Որովն է մարմնացեալդ. այլ զմեր որ-
 դեգրութեան մեծութիւն յայանեաց աւաղա-
 նաւն: Արդ՝ զոչ գրեալսն ընդէր հարկիք ասել
 և ջանայք զանօրէնութիւն Փրկչին այլոց լի-
 նիլ և ապա յետ այսոց բանից ի վերայ
 բերէք թէ Հայր իմ ցայժմ գործէ և ես գոր-
 ծեմ իսկ քայցնու լն և վաստակիլն աստուած-
 ընկալ մարմնոյն՝ զմարմն Փրկչին մերոյ Աս-
 տուածընկալ չէ ուրեք աւետարանեալ: այլ
 կենդանացոցիչ և կամ զնոյն իսկ զԱստուած
 մարդ. բայց թէ զամենայն լրուսն աստուա-
 ծութեան ի նմա բնակեալ զայդ ասել կարիցես
 ուրեմն ոչ իմանայցես թէ զմի աստուածու-
 թիւնն մարմնապէս ի նմա լինել ասես. քանզի
 ընդունօղ յընդունօղի անհնար է լինել
 որպէս ասեն թէ էք զուք նովաւ լցեալ:
 իսկ որ զաստուածավայելուչսն զաստուցանեն
 իբր Բանին և գոնանեութեանն տնօրինութիւն
 մարմնոյն մարդոյն՝ արժան էր ասել ըստ քեզ զի
 անձն և միտս ունէր և համարձակեցուցանել
 թէ Աստուած որ հաստառեաց զձագս երկրի
 ոչ քայցիցէ և ոչ վաստակիցի և ոչ քուն է
 պահապանն իսրայելի և փոխանակ քրիստոնէի
 լինել հրէայ ըստ թրիստութեան. և թէ ոչ
 որ կարէ տեսնել զԱստուած: և ուրանալ
 զգիլն որ ասէ. Տեսաք մեք զնա և ոչ զոյր
 նորա տեսիլ և ոչ փառք և տեսակ նորանուազ
 քան զամենայն որդեոց մարդկան: որոյ զազգա-

* Օր. կարծիքս:

տոհմն չկարէ որ պատմել, և դադարաւորութիւն մեծատանն և զթափումն, անձինն որ յեութեան աստուածութեանն էր, և մանաւանդ զոտս և զձեռս, որով զնշանս արար, զի ոչ է այս ի բնութեան աստուածութեանն, Ապա թէ զբանն Աստուած մարմնացեալ ասեն, յորում էր հոգի բանական միտք ըստ մարդկութեանս, նոյն ոտիւք որ վաստակեցան՝ և ի վերայ ծովուն զնաց, և ձեռքն աշխատողք կաւ արար և եղ ի վերայ երեսաց կուրին, և զնոյն կաւն ակն ստեղծագործեաց, զի ծանիցես դու թէ որ զառաջին մարդն՝ տեղծ՝ նոյն է երեւելն ըստ մարմնոյ, ապա եթէ երբեմն Աստուած և երբեմն մարդ կարծիցես, ոչ կարե՞ն զնա անմեղ ցուցանել, զի մարդոյ միտք ի վայրկեանի յեղումն ընդունին ի չար և ի բարի, Արդ՝ մի լիցի օտարաձայնս իմանալ, արտաքս յայնց քան զոր ուսաքն, զի միում դիմի մարդ կացելոյ զաստուածավայելուչսն և զըստ անտեսութեան քարոզեցաւ: Բայց հարկաւոր է և զհաւատալն ձեր փրկաւէտ չարչարանաց Փրկչին՝ որպէս ծանուցէքն առ ձեզ, երկրորդելբայց զի կրկնարանեալ զնոյն միտս յոլովէ, ի մի տեղուջ ցուցցուք: Արդ՝ ասացեալն այս է, թէ մինն կամօք Հօր և սուրբ Հոգւոյն եկն ի խաչն, և մեք այսպէս ասեմք, թէ սուրբ Քրիստոս Աստուած որ խաչեցար մարմնով, և զչար անմահ և առանց չարչարանաց, և Որդւոյ խաչակից անարգութեամբ համարեալ և ոչ ցաւեցուցեալ, զի զեութիւն զաստուածութիւն Որդւոյ անմահ և առանց չարչարանաց ասեմք, բայց զՈրդւոյ զաստուածութիւնն, զեութիւնն, զանմահութիւնն և զհոգին ոչ ի Հօրէ մեկնեմք, և ոչ ի խաչէն, և ոչ ի գերեզմանէն, և ոչ ի յիւր մարմնոյ, և թէպէտ չմեկնեմք ի մարմնոյն՝ զանչարչարելին ի չարչարելումն չապանանեմք, այլ զչարչարելին յանչարչարելումն չարչարեմք, Արդ, փոքր ինչ հարցից և մանաւանդ ըստ հետազօտութեանն զի վերայ իսկ մեր հասեալն, զՈրդի Աստուած խաչակցեալն կամաւ անարգութեամբ համարելն՝ որպէս է ուրեմն հանդոյն Սանուիէլին, որ ասէրն Աստուած, թէ Ոչ գրեզ անարգելին այլ զիս, կամ որպէս յառաջագոյն ցՊօղոսն ասէր, ի կոփահալածն առնելոյ զառաքեալսն, թէ Զի՞ հալածես զիս և որ այլք

այսպիսիք: Ապա չէ ինչ ընդ մէջ ասել, թէ վաղ իսկ էր մարմնացեալ, զի դորին համարելք ասելոյ զհետ երթայ ի ծննդեանն օրինակ և կոյսն մնալոյ մօրն, եթէ զօրութեամբ և ոչ զործով և զիս անդամն Քրիստոսի լինել, և զամենայն իսկ կիրան ըստ անտեսութեան, և յազատութիւնն զմեզ կոչելն շնորհիւն չե ևս է: Այսպէս և ասացեալն, թէ հանդերձ Հօգւով սրբովն անմեկնելին ի խաչէն և գերեզմանէն և ի մարմնոյն և յամենայն ուստեք, զի թէ որպէս սուրբ Հոգին էր ի մարմնի Բանին, և ի խաչին և ի գերեզմանին և զԲանին Աստուծոյ մարմնանալն, և ի խաչին և ի գերեզմանին զլինելն նմանապէս ասիցես՝ ըստ այդմ և յառաջ քան զմարմնանալն խոստովանելին աստուածապատշաճ և ուղիղք արդ և մինչև յաւիտեանս, և յուրստ զիշխես լինել զյրութենէ, նորա մեղ բուրիցս առնել, և զինուն զամենայնսն և զըրեւակելն նոցա ի սուրբսն՝ ապա և սուրբքն սպանեալք, և կամ որ սպանանին՝ զնա պիտի ասել, վասն զի զիւր կամեն վասն նորա մահու զՊետրոսէ ասելն իմացուցանէ, թէ Ե՛կ զինի իմ, և զամենայնսն՝ վասն կառոյն և թէ որպէս ասէքն կամելովն մի այս է՝ ապա անհամարք քրիստոսք եկեալ են և զալոց են, և այլ ևս համարեալք նշանակէ զամենայնոց ընդ ի սա միշտ և զմիջոց երկնի և երկրի իսկ քարինս և նետս առաքել յուրեքէ՝ որ՝ ուրեմն և զայն իւր համարիցի, իբր թէ ձեծեալ և խոցոտեալ նոքօք, քանզի ընդ զամենայն անմեկնել և մարդիկ արժանիք, և կամ հաւք և կամ այլ կենդանիքն այնպիսեօքն ծախեալքն, ապա և այս չարչարելիք յանչարչարելումն չարչարին, և անհուն աստուածք այլ և այլք աղանդարանին մեզ պաշտելով՝ մտացածնոց յիմարութեան խօսք, ուր քարոզի աւելի քան զգրեալսն իմանալ, Եւ զարձեալ ըստ ասելոյդ, թէ զՀոգին սուրբ և զՈրդւոյ աստուածութիւն ի մարմնոյն և յամենայն ուստեք չմեկնեմք՝ կարծիս տայք ասել վասն համարեալութեան ցուցանելոյ, թէ և Հօգին սուրբ մարմնացաւ, քանզի գերկոսեանն ի մի յընթակալոմն պատմեմք: Այլ ոչ այդպէս ուսուցանէ

* զամաս

վարդապետութիւնն Հոգւոյն սրբոյ. զի թէպէտ
 և սուրբ Հոգին Բանին մարմնացելոյ Հոգի ա-
 սիւ ըստ այնմ թէ Ջհոզին Քրիստոսի ոչ ունի.
 և Ջհոզի Որդւոյ իւրոյ առաքեացն. այսպէս
 և Հօր Հոգի ասիւ և զիմօք որոշեալ մեզ
 պատմի այլ ոչ զատանի ի Հօրէ և յՈրդւոյ. և
 թէպէտ անդատանելի է. այլ ոչ միում մարմ-
 նի Որդի և Հոգի և ի խաչի և ի դերզմա-
 նի իրր թէ մարմնացեալ որ յառաքելոցն և
 ի մարգարէիցն ասաց. բայց միայն զՈրդին Աս-
 տուծոյ զԲանն Հօր մարդկացեալ գրեցին: Եւ
 զի այսպէս է՝ լուր Փիլիպպոս ց՛նաթայէլ ասէ.
 Զորմէ գրեցին Մովսէս և մարգարէքն՝ զտաք
 զԹիսուս ի Նազարեթէ. և զի նոյն է Բանին Հօր
 մարդկացեալ որ խաչեցաւն. Մովսէս պատմէ
 ասէ. Բայ զկեանս ձեր կախեալ զփայտէ յան-
 դիման ձեր. Զոր և Յովհաննէս մեկնեաց. Սա
 է. ասէ. ճշմարիտ Աստուած և կեանք յաւի-
 տենականք. և Երեմիա զկեանս իւր մեռու-
 ցանել ի գրի ասէ. և վիրաւորել և պատժել զնա,
 որոյ զազգատոհմն նորա ոչ որ կարէ պատմել
 զոչէ Եսայի. և զՏէրն փառաց խաչեալ պատմէ
 Պօղոս զոր այլուր լոյս փառաց կոչեաց՝ և ի
 կերպին* Աստուծոյ էր. որպէս պատմի մի ըստ
 միովէ՝ զինքն թափեաց. հնազանդեաց մահու և
 խաչի. Եւ զի ոչ ըստ ամենայն ուրեք լինելոյն
 էր Որդւոյ աստուածութիւնն յիւր մարմինն.
 որպէս ասացէքն. այլ Բանն Աստուած մարդկա-
 ցեալ՝ եկ տես և զաւետարանացն զբարբառս.
 Քանզի Ղուկաս յետ գրելոյն ականատես լինել
 զԲանն նորին սպասաւորացն՝ զազգարանու-
 թիւնն այսպէս էր՝ Թիսուս որոց կարծէր որդի
 որ ի Եովսեփայն որ յԱդամայն որ Աստուծոյն՝
 ասաց. զի որ յայտնի էր. նոյն մարդացեալ և
 ի հովուացն տեսեալ և ի խաչ ելեալ ասաց. և
 Եովհաննէս զԲանն մարմին եղեալ և զկեանսն
 յայտնեալ՝ զնոյն ասաց խաչեալ և եղեալ ի
 դերզմանի. որպէս Երեմիաս յառաջագոյն
 պատմեաց. թէ տեսեալ զմեռեալսն յաւիտե-
 նից՝ ինքն էջ առ նոսա ի հող աշխարհի զի
 կեցցեն. և Աստուած մարդացեալ այնպէս
 յողթեաց զօրացեալ մահու և ապականու-
 թեան. և եհատ զարտօսր յամենայն երեսաց.
 Իսկ թէ Հոգին սուրբ այսպէս ուսուցանէ

յԱստուածաշունչ զիրս և ոչ մարդ աստուա-
 ծազգեաց. որպէս Ստեփաննոսն Հոգւով սրբով
 մեռանէր՝ չարչարելին յանչարչարելումն զհան-
 զոյն ամենայն ուրեքն լինել. էր ի մարմին ի
 խաչին և ի դերզմանին. հանդերձ այլովքն՝
 զայդ ո՞վ որ ոչ ասիցէ թիւր վարդապետու-
 թիւն. Եւ եղեալ ի բանսդ ասացէք. զբեռոսն
 ոչ ի զօրութեանն անմահութեան հարկանեմք.
 Իբրև թէ ի ցաւեցուցանել. այլ աստուածա-
 ցեալ մարմինն՝ բազում անգամ ասա-
 ցաք. զի թէ աստուածացեալ մարմինն
 այլ է. և զօրութիւնն անմահութեանն այլ
 որ թուիմք քեզ ասելն զԱստուածն Բանն՝
 սոսկ երկուս ուրեմն պատմել ձեռնարկէք.
 մի մարմնեղէն Աստուած և միւսն զօրու-
 թիւնն անմահական Աստուած: Բայց զպար-
 զամիտս խաբէք. թէ զօրութիւնն անմահական
 անհազորդ է մարմնոյն՝ մինն Աստուած է և
 միւսն մարդ. իսկ ապա ո՞ւր է միանալոյն ձեր
 բանն զոր վերագոյն փոքր մի խոստովանեցէքն.
 Բայց մեք նախ օրինակաւ ինչ կամիմք հար-
 ցումն առնել. թէպէտ և ոչ պատշաճ է. հուր
 եթէ ի բնութեանց իւրոց զատցի ի Չերմու-
 թենէն. և ոչ սոփորութեան նիւթն մնացեալ
 է՝ կարիցէ՞ կոչել հուր. և կամ ձիւն ի ցրտու-
 թենէն և ի սպիտակութենէն՝ կարիցէ՞ կալ շօ-
 շափելի նիւթն և զձիւնն ունել. արդ՝ որպէս
 սոցա երից տեսակաց ի մի բնութիւն եկեալ
 առանց զատուցման զզոյութիւնն ցուցանեն. *
 և զատուցանելն ջանալ եղծումն զործէ՝ իսկ
 երեւելոյ արեգականն ի բարձանց արդեօք ոչ
 առաւելագոյն զմիաւորութիւնն ունիցիս ի միտ-
 սրդ. Զի և յարեգականէ թէ զատցի ճառագայթ
 լուսոյ Չերմութեամբն՝ զնոսաձև տարինն առանց
 այնց ոչ ասի արեգակն. սոյնպէս թէ զատցի
 Աստուածն Բան ի մարդանալոյն իւրմէ՝ ճը-
 նեալն ի կուսէն ոչ Աստուած մարմնացեալ. այլ
 մարդ ընդ մեղօք անկեալ. Զի թէ միաւորութիւն
 Աստուծոյն Բանին եթող մարդոյն միտք ըստ
 այլոց. որպէս ասացաք. ի վայրկենի մերթ ի
 չար և զարձեալ ի բարի փոխելոյն ոչ դադար-
 րեն. տպա և ոչ առանց մեղաց էր. այլ քաւ լի-
 ցի՝ արեգակն միշտ արեգակն եկաց. որպէս պատ-
 մէն Զաքարիայ. քանզի առաքելոցն ցուցեալ

* Օր. որ ի կերպին.

* Օր. տեսանել ցուցանեն:

զոտս և զձեռս ի վերնաասնն՝ Աստուած փայեւարար ի մտանելն զնոյն ուրեմն վարդապետաց և թուճաս տեսեալ զտեղիս բեւոռացն և զխոցումն կողիցն՝ Տէր և Աստուած իւր խոստովանեաց. վասն որոյ երանեաց Տէր զայնս որոց ոչն տեսեալ և այնպէս հաւատասցենս որպէս տեսողքն՝ առ տեսելն բարբառեցաւ. Բայց Բանին մարդկացեղոյ մարմնոյն և հոգւոյն, որ երեսաց մերոց է Տէր, զբեւոռն թափանցանց առնել ասել՝ ո՛ւմ ոչ յայտնի է յիմարութիւնն. քանզի զմարդիկ խեղս մի և կամ երկու անգամօք՝ ոչ ասեմք և միւսն ընդ նմին խեղեալս. և կամ խոցմամբ և բեւոռք ի փայտի մեռեալք այժմ և կամ ի հնուսն՝ ոչ որ կարէ ասել զոգիւն ընդ նմին բեւոռեալս և խոցոտեալս: Իսկ յառաջ քան զմարմնանայն որ էութիւն Բանին էր՝ խառնեալ և միացեալ ընդ իւր մարմինն ի մարդկանայն, զիարդ վիրաւորեացի: Այլ անհնարին է ասէք այդպէս խոստովանութեամբ զնա առանց վիրաւորութեան ասել. հաւանեցիր յորինակեզ և զխոստովանութիւնն որպէս զիրք Աստուածաշունչք ուսուցանեն մի թիւրեր ի մտացն, և թէ յողթիս՝ զանօրէնութիւն նորա ի քրննել յանձն առ. քանզի դու և ամենայն իսկ մարդ կարիցեն ասել զինքեանց զբնութեան էութիւն, որպէս հոգին ընդ մարմնոյն խառնեալ և կամ շունչ ընդ ջիւս ներգործեալ օժանդակէ նմին մարդոյն և կամ թէ լոյս արեղական և կամ ճրագի, ընդ ական յտակազունի միաւորեալ զտեսութիւն գործէ: Իսկ անօրէնութեան նորա սոսկալի ումեք զթուրցի, և ի վեր քան զիւր միտս և զբան: Ապա թէ ոչ՝ իմա ինձ թէ յարգանդի կուսին որպէս մարմին ինքեան հոգւով և մտօք լինել և զի՛նչ ի մարդէ սաղմնացեալ էր* Բանն Աստուած ի Հոգւոյն սրբոյ յամենայն մարդկանէս ի սկզբանէ լինելութեան մարդոյն, և որք ի ժամանակիս մինչև ցկատարածս՝ Աստուած մարդացեալ ծնանէր, առանց մեղաց, հասակաչափ միոյ մարդոյ, որպէս Պօղոսն պատմէ, որ ոչ է հրէայ և ոչ հեթանոս, խուժաղուժ, սկիւթացի, ծաւայ, ազատ՝ այլ ամենայն ուրեք Զրիստոս է: Ունիս ինչ ասել զորպիսութենէն. ապա իման և զայլ

սրնս թէ են մեզ անհասանելիք, և մի՛ խօսիր. վասն որոյ մարդարէն ի անտեսութիւն նորա հայեցեալ երկնչիւր, և զարմանալ ասէ. ապա հաւատ պիտոյ է և ոչ քննութիւն: Յետ այսր հակառակող արմանս նշանակեալ էր, թէ սոքա ասեն՝ սուրբ անմահ Աստուած որ խաչեցար, անմահ էր ասեն և մեռաւ հոգւով և աստուածութեամբն՝ մի բնութեամբ: Արդ՝ եթէ հակառակողս զմեզ կոչէք և թէ զայլ որ, որպէս ցուցաբք ձեզ զրով ըստ Աստուածաշունչ զրոց վարդապետութեանս զխոստովանութիւն հաւատոց մերոց յՈրդին Աստուծոյ՝ թէ բիւր անգամ հարցանէք զնոյն երկրորդեմք: Բանն Աստուած միւսնոյն էր, որ զամենայն ըստ անտեսութեանն և զնշանան նա գործեաց. բայց ո՞վ որ է թերուսումն, որ ի վերայ մարդոյն չգիտէ զմահ, թէ որոշումն հոգւոյն ի մարմնոյ է, և մարմնոյ յերկիր լուծանէ, իսկ հոգին կենդանի և անապական, որպէս զիրք ասեն զնահապետացն, թէ պակասեալ յաւելաւ ի ժողովուրդ իւր, և զոմանս՝ եթէ յաւելաւ առ հարս իւր, իսկ վասն մարմնոյ՝ եթէ զապականութիւն ետես. քանզի մարդոյ հոգւոյ յանզգայականս լուծումն ոչ որ գիտէ, զի Աստուած միշտ կենդանեաց է Աստուած, և որպէս ինքն կենդանի է և կարող ոչ փոխեցաւ և ի մարդկանայն բայց մեռաւ զիւր զմահն, և պարտեաց զմահ, և վասն զի միութիւն՝ ոչ Բանին միայն, զասն այնորիկ Բանն Աստուած ողովն իւրով առ ի մարդկանէ, երևեցաւ ի զժոխս, արգելեալ ողոյն՝ յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնամտութիւնն, որպէս ասէ Պետրոս և այնպէս աւերեաց զլժոխս. և Աստուած մարմնով ի գերեզմանի զապականութեան իշխանութիւն ի բաց քայքայեալ՝ մեզ զանապականութիւն պարզեաց: Եւ վասն այնորիկ ասեմք զերից սրբասացութիւնն՝ սուրբ Աստուած, սուրբ հօրս սուրբ անմահ որ խաչեցար վասն մեր, երեք սրբասացութեամբք Երրորդութեանն դիմօք և միով աստուածութեամբ, և անմահութեամբ, և Հօր և Հոգւոյն սրբոյ՝ խաչեայն առանց այլ երևմամբ ի մի յէութենէն, զորորմութիւն հայցեմք: Քանզի առաքելական Եկեղեցի այս բարբառով և ձեով միշտ պարծի. զի ի ժամ պատարագի զոհարանական

* Օր. ԿՆԵՐ

զգրուակն ի գէմն Հօր արարեալն՝ երիցս սուրբն ասելով միով տէրութեամբ ընդ Հօր և ընդ Հօգոյն սրբոյ զեկեալն և զգալոցն ի բարձունքս արքայ փառաւորեալ զոչէ. և ասա թէ խաչեալ ասեմք՝ մի՛ զարմանար ջանդի գնա զչարչարանսն իւր փառս կոչէր: Իսկ յետ այլ բանից այսպես զրեալ էր թէ մեք զմարմնոյն մեռանել ձեզ զրոժք ցուցանեմք. եթէ՛ Մարդ Յիսուս Բրիստոս որ եղ զանձնս փրկանս և եթէ Յիսուս Բրիստոս որ մեռանս մանաւանդ թէ յարուցեալ իսկ է և թէ զՅիսուս Բրիստոս զխաչեցեալն խնդրէք. և թէ խաչեցաւ ի մերմէ տկարութենէ և թէ Մարդ Յիսուս Բրիստոս և այլ այսպիսիս ուր ինքն Յիսուս Բրիստոս ըստ խոնարհութեանս մերոյ ցուցեալ լինի: Արդ՝ նախ զայս հարցանեմք. մինչ այդպէս զՈրդի երկուս ասել սիրէք, և զԵրրորդութիւն չորրորդութիւնն մտացածին ստեղծանէք՝ Յիսուս Բրիստոս անունդ ու ինքն ըստ մեր զկիրս նշանակէ, զըստ տնտեսութեանն կամ զքանչեւագործութեանն առ նմին՝ այլ որ Որդի Աստուծոյ կամ Բան Աստուած գտանէք. և թէ որպէս ի վերայ մարմնոյն լոկ որոշեցէք ասել զՅիսուս Բրիստոս. միշտ և կամ մի՛ ուրեք կարիցէք ցուցանել սոսկ ի վերայ մարմնոյն: Իսկ եթէ լսիցես մարմին Բրիստոսէ, մի՛ թէ օտար իցէ այս ձայն յայնմանէ, որ ասեն թէ՛ Բանն մարմին եղև. այլ քաւ: ոչ զանապան բայց մի, և թէ ոչ այսպէս կարծես լուրս զԲրիստոս զիտել մարմնով ասեն զիրք, և Բրիստոսի չարչարելն մարմնով արդ՝ թէ ըստ բո ասելոյդ Յիսուս Բրիստոս մարմնով ասիր, նորին մարմնոյ. այլ մարմին որպէս էր արդեօք՝ մարմին ի մարմն ի եղեալ մի որով չարչարէրն և միւս մարմին Բրիստոս որ ի ներքսն. և այսպէս իմանալն ի պատաւանց ձգտեալ տանի, այլ մի լիցի այդպէս իմանալ զքարոզութիւն առաքելոցն. զի որ ի ձէնջ կամեցեալ բանաձգել ի վերայ մարմնոյն զՅիսուս Բրիստոս անունդ՝ նոյն ցուցաւ ի մեծութեան տկանատեսից Որդի Աստուծոյ և Բանն Աստուծոյ. այսչափ ինչ գրեցաւ, ասէ, զի հաւատացէք թէ Յիսուս քրիստոս է Որդի Աստուծոյ. և թէ՛ Որ փոխացն զմեզ յարքայութիւն Որդոյ սիրելոյ իւրոյ, որով ունիմք զբաւութիւն արեամբ նո-

րա՝ զթողութիւն մեզաց մարմնով նորայ որ է պատկեր աներևութին Աստուծոյ. և թէ՛ Բրիստոս ըստ մարմնոյ որ է ի վերայ ամենայնի Աստուած. և թէ՛ Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուսաբն որում տկանատեսն իսկ եղաք՝ ընդ որ հայեցաքն և ձեռք մեր շօշափեցին զԲանն կենաց. թողից ասել զիտութիւն այսպէս բանից որ ի նոր կտակարանս, վասն խօսից բազմանալոյ: Ապա հաւատագոյն տեղեկացիր թէ Բրիստոս Յիսուս զԲանն Աստուած մարդկացեալ կոչեն զիրք, որպէս և սուրբ ժողովն Նիկիա տաացին թէ ճնաւ կտտարելապէս ի Մարիամոյ հօգուով՝ ըստ այնմ թէ հօգի երեսաց մերոց Տէր Բրիստոս և որովն հօգի և միտք և ամենայն մարդկայինս և ձնեսն կոչեցաւ Յիսուս Բրիստոս: Եւ Պօղոս ասէ. Ոչ զայլ որ ի մտի եղեալ ձեզ զիտել, բայց միայն զՅիսուս Բրիստոս և զնոյն խաչեալ, ապա մի՛ մեռեալ և մի՛ իմանալ ի ձէնջ, զի առասպելաբանի: Բայց ևս առաւելագոյն տարօրէնութիւն մեկնութեամբս արարելով ի ձէնջ իմանի, թէ վասն երկուց և մի բնութեանց Աստուծոյ ի նախագրին օրինակեցաւ. Հրամայեցաւ, ասէ, երկուս հաւս առնուր և ամանս խեցեղէնս և փայտ նոճի և կարմիր և զօպայ և զհնուզ զմի հաւն յաման խեցեղէն՝ որ զուշակեցաւ ի ձէնջ այն մարդոյն բնութիւն, և զմիւսն՝ թացեալ յարեան հաւուն սպանելոյ, դիցեն ի վերայ զիսայն և զայսն և արձակեցեն ի դաշտսն՝ այն զԱստուծոյն բնութիւն ասացէք. և այժմ՝ քաջ միտ դիք ձերում մեկնութեանդ: Պօղոս զբերէ յԵրրայեցւոցն՝ յիշեցուցանելով նոցա զխորանն և զնորին զկահ և զժողովուրդն և զարեան սրսկումն ի վերայ նոցա, և ասէ թէ ամենեքեան արեամբն սրբէին, զի վասն մաքրելոյ արիւնն ցանիւր զնոքօք. ապա և ըստ ձեր ապիրաան լեզուի՝ բնութիւն Աստուծոյն Բանի ի մարդոյն բնութիւն շրջեցաւ, և նորա արեամբն թացեալ ի նմանէ, որոյ եղև առնուլ զանապականութիւն և զՀօգոյն սրբոյ զմաքրութիւն, նմա որ յեութենէն Հօր էր. և այսպիսի բանք ում ոչ շարժեցին արժօսը՝ զկարծիս տայ նմա իւր զիրկութիւն ի մարդոյն հայցել: Ենդիպէս և վասն նոխադայն թէ որ զնաւն մարդոյն բնութիւն էր, և կենդանւոյն յորոյ ձեռս ի վերայ եղեալ և զանօրէնու-

Թիւնս և զմեզս ի վերայն աստուծոյ և նորա-
 յինքն առեալ Բանին Աստուծոյ բնութիւն
 էր, ապա և բոս ձեզ աստուածութեամբն իւ-
 բով զմեզս մեր վերացոյց և ստեալ եղև Պօ-
 ղոս որ ասացն թէ զմեզս մեր մարմնով իւրով
 վերացոյց ի խաչապայտին. Եւ զորոյ զէութիւնն
 ի վշտաց վերագոյն կամիք ասել զայն Լուծիւն
 ընդ մեզօք և ընդ ամբարշտութեամբ ասացէք.
 այլ քան և մի լիցի այդպէս զարհուրելիս իմա-
 նալ ի Ղևտականին գրեալան: Բանդի երկօք
 հաւուքն առեկովք միտմն նշանակեալ լինի Որդին
 Աստուծոյ մարգացեալ և միտմն մեք մարդի-
 կրս. սրգ՝ սպանաւ Որդին Աստուծոյ մարգա-
 ցեալ իմ մահուամբն որպէս վերագոյնն ասա-
 ցաք և արեամբ նորա թացեալ մեք դառք
 զվերիութիւնս և յայնժամ ստացան ի մեզ ա-
 նապահանութիւն որ է նոճի անփոյտ փայան
 և զոպայն որ է ի չօգւոյն սրբոյ ի մեզ մաք-
 րութիւնս և կարմիրն՝ զչնորհս զորգեզրու-
 թեանն Աստուծոյ. և կատարեցաւ բան մար-
 գարեինս թէ անդ եղիցի ուրախութիւն հա-
 ւուցոյ այսինքն մարդկանս: Եղոյնպէս և նոխաղն
 յորոյ վերայ մի հաւն էր զննաւ Արգ՝ Զրիստոս
 Յիսուս Տէր զննաւ բոս մարմնապէս բազում
 անգամ ասացաք և արձակուամն փիճակն ան-
 կաւ ի վերայ մերս զի փիճակեալ մեզ զընտրեա-
 լրս մասն մեղացն թողութեանն և առնորդ նո-
 խաղն զանօրէնութիւն որդւոցն Իսրայէլի ա-
 սացելովքն առաջնորդովքն եկեղեցւոյ որչափ
 նոցա այն շնորհեցաւ ընդ ոմանց զհամարսն
 տալ և որոց կամին յետ մկրտութեան թո-
 դուլ զմեզս Իսկ անապատն եկեղեցի հեթա-
 նոսաց արաքանաւն ծաղկեալ զոր Եսային
 ասէ. Ենծասցէ անապատն և ծաղկէ որպէս
 շուշան անապատն Երբքանանու: Եւ այս ոչ
 թուի քեզ Եկեղեցի առաքելական յորում
 մկրտութիւն է: Բայց թէ ի վերայ Բանին
 մարմնացելոյ կամի որ ասել մի և գնոյն պար-
 տի իմանալ զորս նշանակեալ փիճակաւն զննա-
 նի զիմն մի և գնոյն յարուցեալն որ բարձի-
 չըն եղև դժօխոց խայթոցաւն և զընդաջմէ
 հօր նստեալն. ապա և երկուս իմանալ զնա բոս
 երկուց նոխազացն յանաստուածից դասուցն
 կացուցանէ: Բայց առաջիկայ բանս թուի
 մեզ իմանալ յաւանդութենէ առաքելոցն ի բաց
 փոխումն. զի նշանակեալս ասէ այսպէս թէ՛

զսուրբ Հոգին՝ զմիայն զհոգին զթագաւորն
 թագաւորաց և զՏէրն տէրանց որ միայն
 ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց
 զոր ոչն որ ետես ի մարդկանէ և ոչ տեսա-
 նել կարող է՝ ձեզ յայտնի լիցի մեք առանց
 չարչարանաց և մահու ասեմք: Արգ՝ զսուրբ
 զՀոգին և զՀայր զԱստուած ոչ մարմնացեալ
 ասել քրիստոսն էից յայանի է ամենեցուն
 որպէս ցուցաքն և թէ ասէ որ՝ նզովեալ է.
 բայց ձեր զայդ ասել զի զԱստուածն Բանէ
 է առանց չարչարանաց՝ և մահու զնա ցու-
 ցանելն զեկոյց: Արգ՝ որպէս ասէ քո թէ ոչ
 երեւեցաւ և ոչ չարչարեցաւ և ոչ մեռաւ՝
 է զի և ոչ մարդոյն զոր ասէ ք ի կուսէն ծը-
 նելոյ՝ Աստուածն Բան ի յարելութիւնն ոչ ե-
 դև. քանզի որպէս այն ոչ և այս ոչ. արդ
 սուրբն զայն կոչս աստուածածինն զի ասեմք
 զի նորա ուրեմն սոսկ մարդ լինի ծնեալ
 երեւելի չարչարելի և մահկանացու և հրէիցն
 բարբառոյ առ ի ստուգել թէ Դու մարդ ես և
 զանձն քո Աստուած առնես. այլ և ուրեմն ի մահ
 մարդոյ մկրտիք, քանզի ի նորա մահն մկրտիք
 և զմարդ պաշտեն երկնաւորքն և երկրաւորքս՝
 ի ծուներ կրկնելն Յիսուսի Զրիստոսի և ստե-
 ցին ուրեմն առաքեալքն՝ զնա զորով Որդի Ա-
 ստուծոյ և մանաւանդ ի ձեր ասելոյդ. և
 Փիլիպպոս վրիպեցոյց զնեքինին Ծսացեալ թէ
 իրբ և զոչխար ի սպանդ վարեցաւ որոյ զազ-
 ատոհմն ոչ որ կարէ պատմել և նա զհա-
 ւատայն բարբառէր թէ Յիսուս Զրիստոս է
 Որդի Աստուծոյ. և ինքն գնոյն այլոց քարո-
 զեաց: Բայց ստեցին մարգարէքն և առաքեալ-
 քնն այլ այլք որ ի ճշմարտութենէ թիւրեալք
 են. քանզի Որդին Աստուծոյ մարգարէիք
 ասէ թէ գոայ այնոցիկ որք զիս ոչ խնդրէին
 յայանի եղէ յայնց որ զլինէն ոչ հարցանէին.
 և Ծրեւելի ի Հրէաստանի Աստուած և Ա-
 ստուած մեր յայանապէս եկեղեցէ. և սա է
 Աստուած մեր ընդ որում ոչ համարեցի այլ
 որ որ եղիտ ամենայն զիմաստութեան ճանա-
 պարհս և ետ զնա Իսրայէլի յետ այսորիկ
 յաշխարհի երեւեցաւ և ընդ մարդիկն շրջե-
 ցաւ. և եթէ կոչեցի անուն նորա Իմանուէլ
 այսինքն ընդ մեզ Աստուած. և Միսէօն թէ Տե-
 սին աչք իմ զվերիութիւն Զոր զլոյսոյ յայանեալ
 ազգաց. և Յովհաննէս թէ Կեանքն յայտ-

նեցան և տեսաք և վկայեմք, զի որ էրն առ չօր և երևեցաւ մեզ: Եւ դարձեալ՝ զԱստուած ոչ որ կտեսայ բայց Միածին Որդին որ է ի ծոց չօր, նա պատմեաց մեզ, որ ասեին, թէ Ելի ի չօրէ և եկի յաշխարհս և թէ՛ Որ կտեսն զիս՝ ետես զհայր իմ և ամենայն իսկ մարդարեական և առաքելական ձայնք զնոյն պատմեն: Արդ յայտնի լիցի ձեզ թէ և երևեցաւ քանզի մեք նոցա քաջ հաւատամք, և աքաւ այսպէս պատմեն: Եւ որպէս յիշատակեցաւ ի մէնջ շարչարիլ և մեռանել՝ սակաւութ և այժմ՝ ցուցցուք, ի վաղձան աւուրցս խօսել Որդւոջն, ասէ, զորոյ մեծութիւնն յաջորդք բանիցն ցուցանեն. Որդւոջն խօսեցաւ չայր և Աստուած Որդին վասն ամենեցուն զմահ ճաշակեաց, և որ ի կերպարանս Աստուծոյ էր՝ նա հնազանդ եղև խաչի և մահու, և զի մի յերկարարանեցուք, ինքն շարչարիլովն որով զփորձն էա՞՞ նա է փորձնաւորաց օգնական և Աստուած, և մեք կարացեալքս զնա տեսանել, այսպէս և շարչարեցաւ, և որով և ի դժօխտ յայտնեցաւ ողոցն՝ նովիմք և մեռաւ, և Աստուած ըստ իս ելեալն, և ետ պատերազմ և պարտեաց զմահ և զսպականութիւն՝ զմեր թշնամին աւերեալ, զգժօխնս որպէս ասացարն, և ըստ որում՝ յառաջ քան զշարչարանան մարդկան երևեցաւ՝ այնպէս յայտնեցաւ և հրեշտակաց, և վասն այնորիկ նոյն վերացելոյն փառօք սպասաւորեալ ստորնայքս բարբառէին ի վերինն, առ իշխանութիւնս և պետութիւնս՝ համբառնալ զդրունն ի վեր, զի մացէ թագաւորն փառաց, որք զարմացեալք վասն թանձրացելոյն մարդկային մարմնովն հարցանէին. Ո՞վ է սա թագաւոր փառաց, և անդէն լուեալ թէ՛ Տէր հզոր զօրութեամբ իւրով, Տէր հզոր ի պատերազմի և իբրև անհրեանազանդեալ իմն իշխանութեանցն, և իբր թէ յերկրէ ի վեր երթալն աստուած նոյն հրաման, և իւրեանց հարցումն լսէին դարձեալ զնոյն ինքն է որ թագաւորն փառաց, թաւի ինձ թէ և զվիրացն անդ ուննք հարցանէին, թէ զի՞նչ են վերքդ ի ներքոյ ձեռացդ, յորմէ պատասխանի եղեալ՝ Զորս վիրաւորեցայ ասէ, ի տան սիրելոյն, որոյ տունն մեք իսկ եմք: Արդ ո՞չ զարմանայցես ընդ յայտնի պատմութիւնս հոգւոյն սրբոյ, և ի Պօղոսէ զասա-

ցեալսն վասն բազմաստուածութեանն և կոտորաշտութեանն ի բաց բառնայոյ՝ այնու ուրանաս զմարդկանայն Փրկչին մերոյ, ապա թէ ոչ՝ հաւանել այսմ ձայնի, ի բաց հալածեցի ի մէնջ մարդպաշտութիւն և չորրորդութիւն և միշտ աստուածպաշտութիւն պատուեցի երկրպագութեամբ սրբոյ Երրորդութեանն, և մի լիցի ի մահ մարդոյ մկտել մեզ, այլ Աստուծոյ մարդացելոյ: Իսկ զինի այսպիսի խոստովանութեանն ասացէք՝ իջուցանել զնա ի փայտէն և Աստուածընկալ զերեզմանի զնել, և իւր զինքըն յարուցեալ, արդ, որպէս ասացէքն, թէ մեռեալն Աստուած չէր՝ զերեզմանն աստուածընկալ սրպէս էր, և կամ մինչ մեռաւ ոչ ինքն՝ զիսրդ յառնէր, և ահա զասացեալդ զեղիս և ոչ յայտնիս՝ ասելի է, Բայց ոչ նուազ ըստ այլոցդ զարմացումն մեզ և աւարտման խօսք բերեն, թէ զայ դատել զկենդանիս և զմեռեալս և զդատաստանս իւր ոչ յայտնեաց ումք: Արդեօք ոչ սպառնացաւ հրով այրել զհերձուածոցս և զամենայն շարագործս՝ ուր խաւարն և անքուն որդնն, զոր ի սկզբանէն պատրաստեաց սատանայի Եւ արդ՝ զի զի՞նչ ըստ կամաց և մտաց գնացելոցն զանհաւատութեանն հաւատասցուք, և խառնակ զործովք պղծութեան մարդիկ վարեցին, զի որպէս ասէքդ՝ մինչ զդատաստանն ոչ յայտնեաց, չիմանի զիւրաքանչիւր զործոց առնուլ շարին և բարւոյն և ահա օրինադրութիւնդ լինի առաջնորդ լինելի խաւարն արտաքին: Այլ ո՞վ այդպէս յայտնեաց զդատաստանս իւր Որդին Մարդոյ, զոր ընդ աջն չօրն ետես Ստեփանոս, ի վերայ ուղղահաւատիցն և բարեգործաց՝ զարքայութիւնն իւր և խոտորելոյ ի հերձո, ածս և պղծեալ ի գործս ըստ սատանայի՝ զնմա պատրաստեալ զհեհեանն և ինքն է թագաւոր, որոյ արքայութեանն վաղձանն ոչ գոյ, Բայց հաւանեաւ ընդ իս ասել, մանաւանդ թէ ընդ Պօղոսի՝ անքննելի զդատաստանս նորա, և այսպիսի ինչ է ասելս՝ հրով ասաց, և խաւարաւ, և անքուն որդամբ ասնջիլ ընդ սատանայի զմեղաւորս, և հրոյ բնութիւն լուսաւոր իցէ, իսկ նա խաւարային, և ողի հրոյ՝ տանջման անըմբռնելի, իսկ սատանայ ողի է և տանջի նովաւ ընդ մարմնաւորս, և որդն կենդանի է մարմնաւոր:

յորմէ քուէն և հանգիստ բարձեալ՝ ընդ հրով
 գրեթէ ինչ կրէ, միշտ առտելով զայնս որ անդրն
 իսկ հուր պղիչ, վրիժաւորութիցն և պարա-
 ղիչ որդանն և այլք այսպիսիք, յորմէ յար-
 թին միտք մտադոյ, իսկ մինչ զատաստանք
 նորս և զորժքանքննելի են՝ որչափ առուել
 զատաստան և հանգիստ ամենայնի, Բայց զզա-
 տաստանս և բն յայտնեաց, զոր ի ՅԻՄԼ՝ սաղ-
 մոսին ասաց՝ ան օրինաւ որս և հեթանոսս
 այն պատշաճեցաւ, Արդ՝ զանքննելին ոչ քրն-
 նեցուք, քանզի անքննելի մարգարէին ձայ-
 նակցեցուք՝ ծածուկքն՝ Տեառն Աստուծոյ
 յայտնիքն մեզ Եւ այսպէս կարողութիւն հաւա-
 առնի ի մեզ սնդեկացի բնագէտ, կառ ստիսն որ ի
 սկզբանէն զժնդակութիւնն բռնաձող ի վատ
 ամբարշտութիւն՝ ի բաց մկեացի ի հօտէ Բրիտ-
 առսի, զի զնշանսն բռնեալ խնդրողք հրէա-
 կանքին, որոց զայնթակողութիւնն զիւրաբերելի
 և մարդկային իմաստութեամբ հասու լինել
 կամեցողք նմա՝ հեթանոսականք, զորս յիմա-
 րութիւն բնորէն, Բայց յիկեղեցուջ Աստու-
 ծոյ միշտ քարոզի և քարոզեացի խաչեալն
 Բրիտանս, և սն չէ զիւրապիրժ, կամ վրի-
 պեցուցանող շաւղ ի սուրբ Երրորդութիւնէն,
 այլ առաքելոյ ձայնակից ասն և նորին աշա-
 կերտագմեզգործէ, յէրարեաց[ց] անկաւորզ,
 վիրացո՞ ընդ իս սրագոյն զհայեցուածսդ ի սահ-
 ման անուն սրբոյ Երրորդութեանն, զոր Պօղոսն
 վերդապնեակաց, քանզի նա մեզ զայն աւան-
 դեաց զոր և ինքն բնակուաւ և զրէ գնոցն
 Հռովմայեցոյ, Աղաչեմ զձեզ, ասէ ի ձեռն
 Տեառն մերոյ Յիսուսի, Բրիտանսի և սիրոյ
 Հօգեոյն՝ պատերազմակից լինել ինձ յաղթիս
 սոս Աստուած, Աստուած և Տէր Յիսուս Բը-
 բիտաս և Հօգին սուրբ՝ յայտնի զբրոյ Եր-
 րորդութեանն աւսուցեալ զանունս Եւ զարձեալ
 կորնթացեոցն, Եւսրհք Տեառն մերոյ Յիսուսի
 Բրիտանսի և սերն Աստուծոյ և հազորդու-
 թիւն Հոգեոյն սրբոյ, Եւ Եփեսացեացն, Օրհ-
 նեալ է Աստուած և Հոյր Տեառն մերոյ Յի-
 սուսի Բրիտանսի և ի վերայ երեք թէ՛ որով
 կըքեցայք Հօգ մին սրբով, Եւ առ Տիտոս թէ՛
 Մարգասիրութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ
 յայտնեցաւ և նորողութեան Հօգեոյն սրբոյ,
 զոր եհեղ ի մեզ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
 Բրիտանսի և զրէ թէ՛ ամենայն իսկ առաքե-

լական կտակարանք լի են այսու բարբառով,
 յոր անուն հրաման առաք մկրտել և փառա-
 բանել զսուրբ Երրորդութիւնն, միով երկրպա-
 դութեամբ՝ զնոյն առաքելոցն մի աւետարա-
 նութիւն սերմանեաց երիցս երանեանն սուրբ
 Գրիգորիոս Թագեառնն վիճակիս Ապա թէ՛
 ընդէր տամք տեղի Երրորդութեան պատասել
 զեկեղեցիս Աստուծոյ, զորս Որդին Աստուծոյ
 ժողովեաց զոչեարս ի մի գաւիթ, մի ոք ի մէջ
 երեւեցի Շարաթ և Արիտեթ՝ զօտար հուր
 մատուցանելով անհաւատարմութեամբ, զի մի
 հրատուչոր լիցուք, զմեզ վերստին զերկն ի
 Բրիտանս մի անարգեացուք այլաձեով զհաւատ
 զի մի զնոյնան առ քանան զանէձան յորոշո-
 դէն զօղիսն ընդ այժեացն լիցուք մեք, քանզի
 ընդ մեզ է ձայնդ, Եւ քոս Մխիթար, որ կա-
 չեալդ ևս զլուխ Ամարասու եկեղեցեոյն և զնոյն
 հաւատ ունոյ և դաւակ բարեխօս առ Բրիտ-
 անս Աստուած՝ վասն մեզ ժառանգակից նմա
 եղանկը մի՛ գուչէ լուիցմք, թէ՛ դուք զաւակ
 քանանու ծառայելոցն մեղաց, և ոչ Յուզայի
 խոստովանողի՛ և հրամայեցեմք կարել ընդ
 մէջ և դման և դրոժին ընդ կեղծաւորն
 աննուր թէ՛ որդիք այնց հարանց եմք՝ որք
 անզատանն յառաքելոցն՝ զհաւատս պինդ
 կաղցուք, և մի բռն ընդ ջուր խառնելով ի
 նմանութիւն անխարդախ կաթինն արասցուք,
 զի որոյ անուամբ մեք պարծիմք, նա իսկ չա-
 բտխօս լինի զմէջ առ երկնաւոր Հօրն, Այլ
 և ոչ յորովութիւն ամբոխից հրապուրեացուք,
 բայց ըստ առաւիղիս խրատու մի միտել ընդ բա-
 վումս ի չարիտ, Ընդ ութ ոգիսն տապանափակ
 լինել ջանասցուք՝ ի բազմամբոխն ձգողաց զՋրա-
 հեղձոցն պատահաս, ընդ Ղովոսայ վերծանելն
 հրակեզն անձրեաց՝ ընդ երկուցն ի պարգեւա-
 կանն մտանել յաշխարհ, ի վեց հարիւր հա-
 զարն տապաստելոց, քանզի և այժմ ցանկ բար-
 բառի զերկնս հնչեցուցանելով, ասէ, Մի՛ երկն-
 չիր հօտ փոքրիկ զի հաճեցաւ Հայր ձեր ապ ձեզ
 զարքայութիւն երկնից և զամառեալն յայս-
 ցանէ յորդորեացուք ի նոյն, Բայց մեք որպէս
 բնկալաքն երկրպագութեամբ պատուել զսուրբ
 Երրորդութիւնն՝ առանց թերահաւատելոյ ու-
 նիմք, և կաղցուք մինչև յախտեանս խորե-
 լով յամենայն եղբօրէ, որ յայս ստահակ իցի՛